



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

04 հուլիսի 2021 թվականի թիվ 96- Ա

ք. Երևան

«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ

ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2022 թվականի մայիսի 03-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 15 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառնություններն իրականացնելիս արձանագրել է լսողական մեդիաձառայություն մատուցող «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) կողմից իր «Ռադիո Հայ» լսողական ծրագրի եթերում «Գովազդի մասին» օրենքով ամրագրված վիճակախաղերի գովազդի հեռարձակման սահմանափակումների խախտման փաստ:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2022 թվականի մայիսի 03-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից մշտադիտարկման արդյունքում «Տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների և օպերատորների գործունեության մշտադիտարկման (ուղղակի դիտարկում իրականացնելու միջոցով) իրականացման և արդյունքների վերաբերյալ» 2022 թվականի մայիսի 03-ին կազմված արձանագրությունը:

Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության մոնիտորինգի բաժնի կողմից իրականացվել է Հեռարձակողի գործունեության մշտադիտարկում՝ ուղղակի դիտարկում իրականացնելու միջոցով, որի արդյունքում 2022 թվականի մայիսի 03-ին կազմվել է արձանագրություն: Համաձայն արձանագրության՝ 2022 թվականի ապրիլի 24-ից 28-ի ձայնագրությունների մշտադիտարկման արդյունքում Հեռարձակողի եթերում հայտնաբերվել են հետևյալ խախտումները՝

2022 թվականի ապրիլի 25-ին լրատվական թողարկումից (հաղորդման տևողությունը՝ 14:01:23-14:06:37) առաջ հեռարձակվել է՝

- 15ր 12 վրկ առաջ «Adjarabet.am» (գովազդի տևողությունը՝ 13:45:51-13:46:11)
- 14ր 52 վրկ առաջ «Toto gaming.am» (գովազդի տևողությունը՝ 13:46:11-13:46:31)

2022 թվականի ապրիլի 26-ին լրատվական թողարկումից (հաղորդման տևողությունը՝ 14:01:23-14:06:40) առաջ հեռարձակվել է՝

- 16ր 23 վրկ առաջ «Adjarabet.am» (գովազդի տևողությունը՝ 13:44:40-13:45:00)
- 16ր 3 վրկ առաջ «Toto gaming.am» (գովազդի տևողությունը՝ 13:45:01-13:45:20)

2022 թվականի ապրիլի 27-ին լրատվական թողարկումից (հաղորդման տևողությունը՝ 14:01:23-14:07:12) առաջ հեռարձակվել է՝

- 16ր 38 վրկ առաջ «Adjarabet.am» (գովազդի տևողությունը՝ 13:44:25-13:44:45)
- 16ր 19 վրկ առաջ «Toto gaming.am» (գովազդի տևողությունը՝ 13:44:45-13:45:04)

2022 թվականի ապրիլի 28-ին լրատվական թողարկումից (հաղորդման տևողությունը՝ 14:01:23-14:06:23) առաջ հեռարձակվել է՝

- 13ր 8 վրկ առաջ «Adjarabet.am» (գովազդի տևողությունը՝ 13:47:56-13:48:15)
- 12ր 48 վրկ առաջ «Toto gaming.am» (գովազդի տևողությունը՝ 13:48:16-13:48:35):

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2022 թվականի մայիսի 04-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները, բացատրությունները :

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողը 2022 թվականի մայիսի 18-ին Հանձնաժողով ներկայացրած իր պարզաբանումներում հայտնել է այն մասին, որ իրենց կողմից հեռարձակվող «Ռադիո Հայ» լսողական ծրագրի 2022 թվականի ապրիլի 22-ից 28-ն (արձանագրված ժամանակահատվածը՝ ապրիլի 24-ից 28-ը) ընկած ժամանակահատվածում չի հեռարձակվել վիճակախաղի, շահումով խաղի կամ խաղատան գովազդներ:

Հեռարձակողն իր պարզաբանումներում նշել է նաև, որ «Կարարկո» ՍՊ ընկերության («Adjarabet.am») կողմից գովազդվող «Սլոթ Օսպին» և «Դիջիթեյ» ՍՊ ընկերության («Toto gaming.am») կողմից գովազդվող «Քեշ-քեշ շահումներ», «Բլոտ կոմբատ» ինտերնետ շահումով խաղերը չեն հանդիսանում վիճակախաղ (կից ներկայացվել են «Կարարկո» ՍՊ և «Դիջիթեյն» ՍՊ ընկերությունների համապատասխան գրությունները):

Ըստ Հեռարձակողի 2022 թվականի ապրիլի 25-ին նշված գովազդայն հոլովակները հեռարձակվել են լրատվական թողարկումից 20 րոպե առաջ՝

- «Adjarabet.am» (գովազդի տևողությունը՝ 13:42:25-13:42:46)
- «Toto international bookmakers» (գովազդի տևողությունը՝ 13:42:46-13:43:06)

Լրատվական թողարկումը հեռարձակվել է 14:03:13:

2022 թվականի ապրիլի 26-ին նշված գովազդային հոլովակները հեռարձակվել են լրատվական թողարկումից 20 րոպե առաջ՝

- «Adjarabet.am» (գովազդի տևողությունը՝ 13:41:13-13:41:33)
- «Toto international bookmakers» (գովազդի տևողությունը՝ 13:41:33-13:41:53)
- Լրատվական թողարկումը հեռարձակվել է 14:02:13:

2022 թվականի ապրիլի 27-ին նշված գովազդային հոլովակները հեռարձակվել են լրատվական թողարկումից 20 րոպե առաջ՝

- «Adjarabet.am» (գովազդի տևողությունը՝ 13:40:55-13:41:16)
- «Toto international bookmakers» (գովազդի տևողությունը՝ 13:41:16-13:41:36)
- Լրատվական թողարկումը հեռարձակվել է 14:02:00:

2022 թվականի ապրիլի 28-ին նշված գովազդային հոլովակները հեռարձակվել են լրատվական թողարկումից 20 րոպե առաջ՝

- «Adjarabet.am» (գովազդի տևողությունը՝ 13:44:24-13:44:45)
- «Toto international bookmakers» (գովազդի տևողությունը՝ 13:44:46-13:45:36)
- Լրատվական թողարկումը հեռարձակվել է 14:05:10:

Հեռարձակողը հայտնել է նաև, որ գովազդային հոլովակների եթեր հեռարձակվելու փաստացի ժամանակացույցը հաստատված է ռադիոկայաններով հեռարձակված գովազդների մոնիտորինգի վերաբերյալ տեղեկատվության (տվյալների) տրամադրմամբ զբաղվող «Ռադիոկոնտրոլ» ՍՊ ընկերության կողմից (տեղեկանքը կցվել է):

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»

Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմինը ընտրանքային սկզբունքով իրականացնում է Հեռարձակողների կողմից հեռարձակվող տեսալսողական տեղեկատվության մշտադիտարկումներ յուրաքանչյուր Հեռարձակողի համար ամսվա ընթացքում առնվազն հինգ օր: Մշտադիտարկման արդյունքները կարող են համադրվել հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալներին:

Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է՝ Հեռարձակողների կողմից գովազդի հեռարձակումն իրականացվում է սույն օրենքի և «Գովազդի մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են՝

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները: Դիտարկման արդյունքների և տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալների համադրման դեպքում մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են նաև դիտարկման արդյունքների և տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալների միջև անհամապատասխանությունը, անհամապատասխանությունների քանակը և տևողությունը»:

Իսկ Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց:

«Գովազդի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովն է:

«Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասը սահմանում է.
«Արգելվում է վիճակախաղի գովազդումը լրատվական թողարկումների ընթացքում, դրանցից 20 րոպե առաջ և 20 րոպե հետո»:

«Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ ինտերնետ շահումով խաղերի գովազդի նկատմամբ կիրառվում են սույն հոդվածով վիճակախաղի գովազդի համար սահմանված պահանջներն ու սահմանափակումները:

Հանձնաժողովն ամրագրում է, որ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողները գովազդ հեռարձակելիս պարտավոր են պահպանել Օրենքով և «Գովազդի մասին» օրենքով գովազդի առանձնահատկությունները սահմանող դրույթները և ապրանքների առանձին տեսակների գովազդի առանձնահատկությունները սահմանող «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից լրատվական թողարկումների ընթացքում, դրանցից 20 րոպե առաջ և 20 րոպե հետո արգելվում է վիճակախաղի գովազդումը, իսկ 15-րդ հոդվածի 15-րդ մասի սահմանում է, որ ինտերնետ շահումով խաղերի գովազդի նկատմամբ կիրառվում են սույն հոդվածով վիճակախաղի գովազդի համար սահմանված պահանջներն ու սահմանափակումները:

Հանձնաժողովն ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը, վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված և ներկայացրած փաստերը՝ ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ «Ռադիո Հայ» տեսալսողական ծրագրի եթերում 2022 թվականի ապրիլի 24-

ից և 28-ն ընկած ժամանակահատվածում լրատվական թողարկումից առաջ՝ օրենքով արգելված ժամանակահատվածում, հեռարձակվել են «*Adjarabet.am*» և «*Toto gaming.am*» գովազդներ:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ «Գովազդի մասին» օրենքով տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների համար վիճակախաղի գովազդն արգելող դրույթ է սահմանված՝ մասնավորապես՝ արգելվում է գովազդը լրատվական թողարկումների ընթացքում, դրանցից 20 րոպե առաջ և 20 րոպե հետո, սակայն Հեռարձակողի կողմից չեն պահպանվել «Գովազդի մասին» օրենքով ամրագրված գովազդի հեռարձակման սահմանափակումները՝ դրանով իսկ խախտելով «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջը:

Հանձնաժողովն ամրագրում է նաև, որ Հեռարձակողն իր բացատրություններում անդրադարձել է 2022 թվականի 24-ից 28-ն ընկած ժամանակահատվածում լրատվական թողարկումից առաջ հեռարձակված վիճակախաղերի գովազդներին՝ ներկայացնելով դրանք որպես «Կաբարկո» ՍՊ ընկերության («*Adjarabet.am*») կողմից գովազդվող «Սլոթ Օսպին» և «Դիջիթեյ» ՍՊ ընկերության («*Toto gaming.am*») կողմից գովազդվող «Քեշ-քեշ շահումներ», «Բլոտ կոմբատ» ինտերնետ շահումով խաղեր, սակայն Հեռարձակողի կողմից ներկայացված բացատրությունները և պարզաբանումները հիմնավոր և բավարար չեն, քանի որ «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն վիճակախաղի գովազդումն արգելվում է լրատվական թողարկումների ընթացքում, դրանցից 20 րոպե առաջ և 20 րոպե հետո, իսկ 15-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ ինտերնետ շահումով խաղերի գովազդի նկատմամբ կիրառվում են սույն հոդվածով վիճակախաղի գովազդի համար սահմանված պահանջներն ու սահմանափակումները:

Տվյալ դեպքում լրատվական թողարկումից առաջ՝ օրենքով արգելված ժամանակահատվածում, հեռարձակվել է «*Adjarabet.am*», «*Toto gaming.am*» գովազդ:

Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 154-Ա որոշման համաձայն սահմանվել է տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի ձևը և վարման կարգը և համաձայն որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ և 7-րդ կետերի՝

«6. Տեսալսողական մեդիաձառայություն մատուցողները տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում մուտքագրում են հետևյալ տեղեկությունները՝ 1) տեսալսողական հաղորդման հեռարձակման օրը, ամիսը, տարեթիվը, 2) տեսալսողական հաղորդման սկիզբը և ավարտը, 3) տեսալսողական հաղորդման անվանումը, 4) տեսալսողական հաղորդման թեմատիկ ուղղվածությունը, 5) հեռարձակման տեսակները (հայրենական, սեփական, օտարերկրյա, վերահեռարձակում, տեխնիկական անջատում, պրոֆիլակտիկա, ընդմիջում), 6) տեսալսողական հաղորդման հեռարձակման լեզուն, 7) այլ տվյալներ:

7. Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում սույն կարգի 6-րդ կետի 1)-ից մինչև 6) ենթակետերում նշված տեղեկությունների գրանցումը պարտադիր է:»

Հեռարձակողի կողմից տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան մուտքագրված տեղեկությունների համաձայն՝ «գովազդ»-ը և «Լրատվություն»-ը մշտադիտարկված օրերին հեռարձակվել է հետևյալ ժամերին՝

2022 թվականի ապրիլի 25-ին լրատվական թողարկումից (հաղորդման տևողությունը՝ 14:00:00-14:05:30) առաջ հեռարձակվել է՝

- Գովազդ (գովազդի տևողությունը՝ 13:44:43-13:45:44),

2022 թվականի ապրիլի 26-ին լրատվական թողարկումից (հաղորդման տևողությունը՝ 14:00:00-14:05:32) առաջ հեռարձակվել է՝

- Գովազդ (գովազդի տևողությունը՝ 13:43:31-13:44:40),

2022 թվականի ապրիլի 27-ին լրատվական թողարկումից (հաղորդման տևողությունը՝ 14:00:00-14:06:05) առաջ հեռարձակվել է՝

- Գովազդ (գովազդի տևողությունը՝ 13:43:16-13:44:44)

2022 թվականի ապրիլի 28-ին լրատվական թողարկումից (հաղորդման տևողությունը՝ 14:00:00-14:05:14) առաջ հեռարձակվել է՝

- Գովազդ (գովազդի տևողությունը՝ 13:46:46-13:48:14):

Հետևաբար, ունենք հենց Հեռարձակողի կողմից իսկ ներկայացված տարբեր տվյալներ՝ գրավոր բացատրությամբ և տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան մուտքագրված տեղեկությունների համաձայն: Որպես օրինակ դիտարկենք սույն թվականի ապրիլի 25-ի տվյալները՝

Ըստ Հեռարձակողի գրավոր բացատրության գովազդը հեռարձակվել է՝ *Adjarabet.am» (գովազդի տևողությունը՝ 13:42:25-13:42:46), իսկ «Toto international bookmakers» (գովազդի տևողությունը՝ 13:42:46-13:43:06), իսկ ըստ տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան մուտքագրված տեղեկությունների՝ գովազդ (գովազդի տևողությունը՝ 13:44:43-13:45:44):*

Հանձնաժողովի կողմից 2022 թվականի հուլիսի 04-ին անցկացված վարչական վարույթի քննարկման նիստին ներկա էին Հեռարձակողի ներկայացուցիչները, ովքեր ևս մեկ անգամ հաստատել են վարչական վարույթի շրջանակներում դեռևս 2022 թվականի մայիսի 18-ին Հանձնաժողով գրավոր ներկայացված պարզաբանումները և հավելել, որ իրենց կողմից միանշանակ խախտում չի եղել և գովազդն օրենքով արգելված լրատվական թողարկումների ընթացքում, դրանցից 20 րոպե առաջ և 20 րոպե հետո չի հեռարձակվել:

Նիստի ընթացքում հեռարձակողի ներկայացուցիչները Հանձնաժողովին ներկայացրել են փաստաթուղթ՝ արձանագրված օրերի լսողական հաղորդումների մեկնարկային ժամերի վերաբերյալ:

Այսպիսով, Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի մասնակցի կողմից ներկայացված փաստերը և պարզաբանումները, որոնք համադրվել են Հանձնաժողովի կողմից իրականացված դիտարկման արդյունքների հետ (Հանձնաժողովը որպես տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող պետական մարմին Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացնում է մշտադիտարկման միջոցով և Հեռարձակողի գործունեության մշտադիտարկման արդյունքների հիման վրա 2022 թվականի մայիսի 03-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում

ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց) և ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է Հեռարձակողի կողմից իրականացված իրավախախտում:

Փաստում ենք նաև, որ Հեռարձակողը հանդիսանում է լսողական մեդիածառայություն մատուցող, որը հեռարձակում է լսողական հաղորդումներ և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքով արգելված արարքի կատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և սվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջները:

Այսպիսով, Հեռարձակողի կողմից իրականացվել է իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասի հատկանիշներին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք.
- 3) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ հեռարձակողի կողմից «Գովազդի մասին» օրենքի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով, 14-րդ հոդվածի 7-րդ մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ և 15-րդ մասերով, 24-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց***.

1. «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

04 հուլիսի 2022թ.

ք. Երևան